



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ թիվ 0269 /01/ 2009թ.
Նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան
Դատավորներ՝ Գ. Արզումանյան
Ն. Գրիգորյան

Քրեական գործ թիվ 0269 /01/ 09թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«28» ապրիլի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով, կազմով.

նախագահությամբ՝ Կ. Ղարայանի
դատավորներ՝ Ի. Կարապետյանի
Գ. Հարությունյանի

քարտուղարությամբ՝ Վ. Հարությունյանի
մասնակցությամբ՝
դատախազ՝ Ն. Պողոսյանի
պաշտպան՝ Յու. Դանիելյանի
տուժող՝ Ա. Ավանեսյանի
տուժողի իրավահաջորդ՝ Ա. Հայրիյանի

դռնբաց դատական նիստում քննելով ամբաստանյալ Ջորի Ալբերտի Հայրիյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 141-րդ հոդվածով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունվարի 29-ի որոշման դեմ ամբաստանյալ Ջ. Հայրիյանի պաշտպան Յու. Դանիելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Ջորի Ալբերտի Հայրիյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտվել համապատասխանորեն՝ ազատազրկման 14 (տասնչորս) տարի և 6 (վեց) ամիս ժամկետներով: ԼՂՀ քրեական

օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժների լրիվ գումարելու միջոցով Ջ. Հայրիյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 14(տասնչորս) տարի 6(վեց) ամիս ժամկետով:

Ամբաստանյալ Ջ. Հայրիյանի պաշտպան Յու.Դանիելյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունվարի 29-ի որոշմամբ դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ, պատճառաբանելով, որ ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չեն տրվել:

Գործով դատապարտվել է նաև Ա. Բաբայանը՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով՝ ազատազրկման 9(ինը) տարի 6(վեց) ամիս ժամկետով, որի կողմից դատավճիռը՝ վերաքննության և վճռաբեկության կարգով չի բողոքարկվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ջ. Հայրիյանի պաշտպան Յու. Դանիելյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Համաձայն մեղադրական եզրակացության՝ Ջորի Հայրիյանն Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում, իմանալով, որ նույն գյուղի բնակչուհի՝ 19.05.1993թ. ծնված Աննա Արթուրի Ավանեսյանի 16(տասնվեց) տարին դեռ չի լրացել, ամուսնանալու նպատակով, 2008թ. սեպտեմբերի 19-ին վերջինիս կամքով փախցրել ու նույն օրը սեռական հարաբերությունների մեջ է մտել նրա հետ, պատճառելով նրան բարոյական վնաս:

Նույն ինքը՝ 2009թ. հունիսի 7-ին ժամը 22-ի սահմաններում Արամ Բաբայանի հետ նախնական համաձայնությամբ, Ասկերանի շրջանի Սղնախ գյուղից նախկին վիճաբանությունների կապակցությամբ հարցերը պարզելու պատրվակով, ծանր աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում գտնվող՝ Ալեքսանդր Աշոտի Ավանեսյանին տարել են գյուղից 2,2 կմ հեռավորության վրա գտնվող «Հղեն յուրդ» կոչվող անտառահատվածը, որտեղ վրեժխնդրության և անձնական անբարյացակամ հարաբերությունների հողի վրա, Արամ Բաբայանի հետ համատեղ գործելով՝ Աշոտ Ավանեսյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, օգտվելով նրա անօգնական վիճակից, սկսել է ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնել վերջինիս մարմնի տարբեր մասերին, նվազագույնի հասցնելով վերջինիս՝ իր կյանքը պաշտպանելու հնարավորությունն ու զրկելով նրան դիմադրելու հնարավորությունից, որի ընթացքում Արամ Բաբայանը նախօրոք իր հետ վերցրած խոհանոցային դանակով դիտավորությամբ բազմաթիվ հարվածներ է հասցրել Ալեքսանդր Ավանեսյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կրծքավանդակի առջևի աջակողմյա շրջանում 4(չորս) կտրոդ-ծակոդ վերք, մեջքի շրջանում՝ 3 կտրոդ-ծակոդ վերք, ծոծրակի շրջանում՝ 2 կտրոդ-ծակոդ վերք, աջ ձեռքի բազկի վերևի շրջանում՝ 1 կտրոդ-ծակոդ վերք, իսկ ինքը՝ Ջորի Հայրիյանն իր հերթին փորձել է Արամ Բաբայանից վերցնել դանակը և հարվածներ հասցնել Ա. Ավանեսյանի մարմնին ու տեսնելով, որ վերջինս փորձում է գնալ գյուղի ուղղությամբ և ընկել է գետնին, միասին քարշ տալով նրան թաքցրել են անտառի մեջ, որտեղ էլ Ա. Ավանեսյանը ստացած կտրոդ-ծակոդ մարմնական վնասվածքներից մահացել է:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 37, 40, 41, 61 հոդվածների, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները: Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանի հետևություններն այն մասին, որ Ջորի Հայրիյանը և Արամ Բաբայանը նախնական համաձայնությամբ են կատարել Ա. Ավանեսյանի դիտավորյալ սպանությունը, անհիմն են: Համատեղ կատարված սպանության հանցակազմ կարող է լինել միայն, եթե սպանությունը մասնակցած անձանցից յուրաքանչյուրի գիտակցությամբ ընդգրկված է սպանությունը կատարելու գործում մեկը մյուսին աջակցելու փաստը, ինչը, սակայն, դատաքննության ընթացքում չի ապացուցվել: Դատաքննության ընթացքում հաստատվել է, որ

ամբաստանյալ Չ. Հայրիյանը տուժող Ա. Ավանեսյանի կողմից պարբերաբար դրսևորված հակաբարոյական վարքագծի կապակցությամբ և ծանր վիրավորանք հասցնելու համար մեկ անգամ հարվածել է Ա. Ավանեսյանին, իսկ վերջինիս դանակահարելու միջոցով կյանքից զրկել է Արամ Բաբայանը:

Ըստ բողոք բերողի՝ անհիմն է նաև ստորադաս դատարանի այն հետևությունը, թե ամբաստանյալը պարտավոր էր կանխել, խափանել Արամ Բաբայանի գործողությունները, քանի որ Չ. Հայրիյանը չի հանդիսանում իշխանության կամ իրավապահ մարմնի ներկայացուցիչ, որոնց պարտավորությունների մեջ է մտնում այդ ֆունկցիան:

Ստորադաս դատարանը հաշվի չի առել, որ սույն քրեական գործով առկա է հանցակցի սահմանազանցում, որը բնութագրվում է նրանով, որ կատարողներից մեկն իրականացնում է պայմանավորված հանցագործությունից իր բնույթով բոլորովին տարբեր հանցանք կամ էլ պայմանավորվածից բացի ևս մեկ այլ հանցանք: Համաձայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կատարողի սահմանազանցման համար մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում: Որակական սահմանազանցման դեպքում մյուս հանցակիցները պատասխանատվության են ենթարկվում դարձյալ իրենց դիտավորությամբ ընդգրկված արարքին հանցակցելու համար:

Այսպիսով, Չ. Հայրիյանը և Ա. Բաբայանը պայմանավորվել են վնաս պատճառել միայն Ա. Ավանեսյանի առողջությանը, սակայն Ա. Բաբայանը սպանել է նրան: Չ. Հայրիյանը չի մասնակցել Ա. Ավանեսյանի սպանությանը, այլ միայն ցանկացել է թաքցնել հանցագործության հետքերը:

Դատարանը գնահատական չի տվել տուժող Ա. Ավանեսյանի մասին վկայող ապացույցներին, այն, որ նա տարիներ շարունակ անբարոյական կյանք է վարել, գյուղում պարբերաբար խախտել է հասարակական կարգը, ակոհոլային ազդեցության վիճակում դանակով, կացնով սպառնացել է համագյուղացիներին, Չ. Հայրիյանին և Ա. Բաբայանին, և այդ պատճառով նրանք ուզում էին խոսել նրա հետ:

Բողոք բերած անձը խնդրել է Չ. Հայրիյանի մասով բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի որոշումը և նրա կատարած արարքը որակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 128-րդ հոդվածի 3-րդ մասով, 334-րդ հոդվածի 1-ին մասով և նշանակել արդարացի պատիժ:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել, իսկ դատարանի որոշումը՝ թողնել անփոփոխ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

2) նոր կամ նոր երևան եկած հանգամանքները:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է դատական սխալի հասկացությունը: Այդ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք է հանդիսանում դատական սխալը, որը կայանում է դրանում, որ՝

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին.

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը.

3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում.

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Վճռաբեկ բողոքը բերվել է այն հիմքով, որ դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, և ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ մի խումբ անձանց կողմից հանցանքը կատարելու դեպքում յուրաքանչյուր մասնակցի դերը օբյեկտիվ բացահայտելու համար սպանության գործերով կարևոր նշանակություն ունեն տուժողին կյանքից զրկելու շարժառիթներն ու նպատակը:

Անհրաժեշտ է պարզել, թե ինչն է վեճի ու կովի առիթ և պատճառ հանդիսացել, ով է եղել դրանց հրահրողը, ինչ է իրենից ներկայացնում հանցավորի և տուժողի անձը, ինչպիսին են եղել նրանց փոխհարաբերությունները, գործողությունների բնույթը, ով է նրանցից ակտիվ կողմը, որոնք են վեճի և կովի ընթացքում կատարված սպանության շարժառիթները:

Շարժառիթը բացահայտելու համար կարևոր նշանակություն ունի հանցավորի գործողությունների բազմակողմանի վերլուծությունը ինչպես սպանություն կատարելու պահին, այնպես էլ մինչև սպանությունը և դրանից հետո: Նշված հանգամանքները պարզվում են գործով հավաքված ապացույցների միջոցով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն, ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում նույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ և 137-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ գործով հավաքված ապացույցներն ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, ապացույցների ձեռք բերման աղբյուրները ստուգելու միջոցով, և դատարանն ապացույցները գնահատում է ապացույցների համակցության մեջ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Ի խախտումն նշված հոդվածների պահանջների, անտեսելով ձեռք բերված բավարար ապացույցները, այդ թվում նաև ամբաստանյալ Ջ.Հայրիյանի նախաքննության սկզբնական փուլում տված ցուցմունքները, որոնցում նա իրեն լիովին մեղավոր էր ճանաչել մեղսագրված հանցագործությունների կատարման մեջ, և որոնք վկայում են այն մասին, որ տուժողի հետ վեճի հրահրողն եղել է հենց ամբաստանյալ Ջ. Հայրիյանը, որն առաջինն է բռնություն գործադրել տուժողի նկատմամբ, որ դատապարտյալ Ա. Բաբայանը (որը հանցագործության կատարման պահին անչափահաս էր) որևէ անձնական դրդապատճառ չի ունեցել ինքնուրույն տուժողին սպանելու համար, այլ՝ որպես ընկեր, գործել է ամբաստանյալի հետ միասնական դիտավորությամբ, որ Ջ. Հայրիյանը՝ տուժողին ոտքերով հարվածներ հասցնելով, նախատեսում և ցանկանում էր հնարավոր յուրաքանչյուր հետևանքի առաջացում, բողոք բերած անձը անհիմն հետևության է գալիս, որ տեղի է ունեցել հանցակցի սահմանազանցում:

Մինչդեռ, ԼՂՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցակցի սահմանազանցում է համարվում անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ:

Իսկ ինչ վերաբերում է բողոքի այն պատճառաբանությանը, որ Ջ.Հայրիյանը և Ա. Բաբայանը նախապես չեն պայմանավորվել կատարել սպանություն, ապա Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սպանությունը մի խումբ անձանց կողմից որակելու համար որևէ իրավական նշանակություն չունի, թե այն կատարվել է նախնական համաձայնությամբ, թե առանց դրան: Ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց նախնական համաձայնության խմբի կողմից սպանություն կատարելու դեպքում պարտադիր պայման է երկու կամ ավելի կատարողների՝ համակատարողների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը պետք է անմիջականորեն լրիվ կամ մասամբ կատարի հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ գործողությունները, ընդ որում, եթե մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ սպանությունը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, ապա առանց նախնական

համաձայնության սպանությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է հաստատված համարել նաև այն, որ ամբաստանյալ Ջ. Հայրիյանը, տեսնելով, որ տուժող Ա. Ավանեսյանը ստացած բազմաթիվ վնասվածքներից ի վիճակի չէ ինքնուրույն տեղաշարժվելու, իր առաջարկով՝ Արամ Բաբայանի հետ միասին, Ա. Ավանեսյանին տեղափոխել են անտառի խորքը՝ դրանով իսկ վերջինիս գրկել օգնություն ակնկալելու բոլոր միջոցներից, Ջ.Հայրիյանը գիտակցել է, որ իր գործողություններով հանցակցում է մի խումբ անձանց կողմից սպանություն կատարելուն, նախատեսել է Ա. Ավանեսյանին կյանքից զրկելու անխուսափելիությունը և ցանկացել է նրան մահ պատճառել:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են գործի ըստ էության ճիշտ լուծման համար: Դատարանները գործը քննելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ թույլ չեն տվել, դատական որոշումներն օրինական են, հիմնավորված և պատճառաբանված, ուստի ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի ուժով վճռաբեկ բողոքն ենթակա է մերժման, իսկ վերաքննիչ դատարանի բողոքարկվող դատական ակտն՝ թողնելու անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ջորի Հայրիյանի պաշտպան Յու. Դանիելյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունվարի 29-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Կ. ՂԱՐԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**